



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





W 10294 W 83

# ՀՅՈՒԱԹՆԵՐԻ ԱՃԽԱՐԾ



391.99

۱۱-۴۲

1

✓ 10194

40

19 NOV 2010

1 ՀԵՂԻ ԹԱՍԻ ԹԵՎԵՐԻ ԱՇԽԱԲԱԴ 1

891.99

61-44...

Դ. ԱՂՋԵՄԵՑ

23 JUN 2005

# ՀԵՖԻԱՓՈՆԵՐ

Գիլենազ տատի հէքիաթը  
Այծատուր  
Զանդի-Զբանդի  
Մանուկ-լսան



**Համարակարին  
«Ա. Լիսիթեսոն և ընկանացին»**

ԹԻԳԼԻԶ 1904

Տպարան „ՀԵՐՄԵՍ“ Մադար. փող., 15.

(55)



## ԳԻՒԼՆԱԶ ՏԱՏԻ ՀԵՔԻԱԹԸ

Չմեռն էր, զիշերը երկար: Գիւլնազ տատը, գլուխը  
բարձի վրա դրած՝ ննջում էր: Երեխէրը վրա թափւեցին,  
բունը փախցրին, որ իրանց համար մի հեքիաթ ասի. նա  
էլ սկսեց:

—Էլել է չի էլել՝ մի սիրուն արտուտիկ:

Կտուցը սուր՝ մեր Սուրիկի քթի նման,

Բըմբուլը խուճում՝ Արմիկի մազերի նման,

Թւերը փափլիկ, Արփիկի կոների նման:

Մհա այսպէս սիրուն էր արտուտիկը:

—Բա ինձ նման ոշինչ չունէր, ասաց Վանին:

—Բա ինձ, ձայն տըւաւ Հոփիսիկը:

—Ինձ էլ չասեցիր, տատիկ, —լաց էլաւ Նաղիկը:

—Սպասեցէր, սպասեցէր, երեխէր, դեռ չեմ վեր-  
ջացրել. ամենըիդ էլ բաժին կը հասնի, —ասեց տատիկը  
և շարունակեց:

—Աշիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս Վանինի  
աշքերը:

—Իատարն այնպէս կարմիր էր, ինչպէս Հոփիսիկի  
թըշերը:

—Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս Նաղիկի մատ-  
ները:

—Ես ոտներ չեմ ուզում, դանդատեց Նաղիկը:

—Բա ինչը կուզես, Նաղիկ: Եթէ «տոտիկներ» տ-  
սեմ, կուզես, —ասում է տատիկը:

—Չեմ ուզում, ոչ ոտներ կուզեմ, ոչ տոտիկներ. Ես  
աշիկներն եմ ուզում:

—Աշիկներն ինձ է տըւել տատիկը, քեզ չեմ տալ,  
զոշեց Վանին:



32898-61

— Նազիկ, կուզես, կատարը դու վեր առ, տոտիկները ես կրվեցնեմ, ասաց Հոփիսիկը:

— Չեմ ուզում, ես աշխինելո՞ւ ուզում, պիտեց Նազիկը:

— Վանի, զու կատարը վերցրու, ես տոտիկները, իսկ Նազիկը՝ աշխիները, խնզրեց Հոփիսիկը, որ ամեն կերպ աշխատում էր հաշտութիւն ձգել:

— Ի՞նչ եմ անում կատարը, տատիկն ում ինչ որ տըւել է, այն է նրանը, պնդեց Վանին:

— Ճշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից զոչեցին երեխը:

Նազիկը դո՞ւ չը մնաց և վէճը երկար շաբունակւեց, բայց տատիկը չէր լսում. նա զլուխը դբել էր բարձին և քնել, էլ չէին կարող զարթեցնել: Վեր կացան, իրանը էլ մտան տեղըները:

Միւս երեկոյին երեխէքը էլի հաւաքւեցին տատիկի մօտ, որ լսեն հէքիաթի շաբունակութիւնը: Նա էլ սկսեց.

— Անցած գարնանը մեր պարտէզի ծառի վրա մի սիրուն կըկու կար: Ես նստած էի ծառի տակին, և զուք մէկ-մէկ եկար ինձ մօտ:

Երբ որ Սուրբիկը ներս մտաւ, կըկուն կանչեց.— Կուկոււ: Եկաւ Սրմիկը, կանչեց.— Պուլ-պուլ:

Եկաւ Սրփիկը, կանչեց.— Տուլ-տուլ:

Եկաւ Հոփիսիկը, կանչեց.— Գուլ-գուլ:

Եկաւ Վանին, ասեց.— Բուլ-բուլ:

Եկաւ Նազիկը, կըկուն էլ ոչինչ չասեց, թուաւ, դնաց: — Օխ, օխ, Նազիկ, օխ, օխ, կըկուն քեզ համար

ոչինչ չի ասել... միաբերան զոչեցին երեխէքը և զըգ-ըցըրին Նազիկին:

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչու կըկուն նրա համար ոչինչ չի ասել և սկսեց լաց լինիլ:

Տատիկն ասեց.— Նազիկ, գիտես՝ ինչու կըկուն քեզ համար բան չասեց: Նա վախեց քեզանից: Ինչ որ ասէր, զու շըպիտի հաւանէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալ, ինչպէս անցած երեկոյին:

— Տատիկ ջան, տատիկ, որ մէկ էլ կըկուն գայ, ասա՝ ինձ համար էլ մէկ բան ասի. ինչ էլ որ ասի, ես կընդունեմ,— աղաչեց Նազիկը և այնուհետև շատ խելօքացաւ:

### ԳԻՒԼՆԱԶ ՏԱՏԻԿ ԹՈՌՆԵՐԻ

Մէկ անգամ Գիւլնազ տատիկն շըջապատեցին իր թոռները և ստիպեցին, որ տատը թունիկներ շինէ նրանց:

Տատն էլ վեր առաւ վորքիկներից մէկին, դրաւ ծնկան վրայ, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր թափ տալով երգեց.

Դու—դու—դու, ա զու—զու.

Նակ, նակ, ա—զու—նակ, թը՛ռռռ...

Յետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի գիրկը և ասեց.— Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաչաղակ շինես...

Տատիկը նրան էլ դրաւ ծընկներին և առաջւան պէս երգեց.

Զա—չա—չա, կա—չա—չա,

Ղակ, ղակ, կա—չա—ղակ, թը՛ռռռ...

— Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինես, ասեց ամննից վորքիկը:

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թըռնելով երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլւլում եմ,

Ծիւ, ծիւ, ծիւ.

Աստուտում եմ, թոչկոտում եմ,

Ծիւ, տիւ, տիւ:

Արի, թեիկ, արի, փետրիկ.

Որ ես զանամ վորքիկ ծիտիկ,

Փորքիկ ծիտիկ, պիծիկ—միծիկ, թը՛ռռռ...



## ԱՅԾԱԾՈՒՐ

### 1.

Ելել է չի էլել մի հարուստ սովորաբ: Այս սովորաբը իր բարւանով իշնում է մէկ զիշեր մի գիւղի մօտնէս զիշերին վեր է կենում որ պտըտի քարւանի չորս կողմով և պատւէր տայ պահապաններին, որ արթուն մսան, մէկ էլ տեսնում է՝ երկու մարդ դուրս եկան զիւղից, նրանց առաջը եկաւ մի ուրիշ մարդ և հարցըեց:

—Ի՞նչ բախտ զըեցիք նորածին մանուկի համար:

Մարդիկը պատասխանեցին.

—Այստեղ իշած սովորաբարի բախտը նրան տըւինք: Այս ասացին մարդիկը և իսկոյն աներեւյթ եղան:

Սովորաբարն իսկոյն իմացաւ, որ նրանք երեխանց ճակատի վրայ նրանց բախտը զըող հրեշտակներ էին. շատ տիրեց, որ իր բախտը տըւել են մի նորածին մանուկի. էլ նրա քունք չըտարաւ այն զիշերը:

Լուսացաւ թէ չէ, սովորաբը զնաց գիւղը և հարցու փորձ անելով իմացաւ, թէ ում տանն է երեխայ ծընել այն զիշերը: Գնաց տեսաւ բարուրի մէջ մի սիրուն փափլիկ տղայ, և առաջարկեց նրա հօրն ու մօրը, որ երեխան իրան տան:

—Ես մեծ կարողութեան տէր եմ, ասաց, բայց որդի չունեմ: Ես դրան կը որդեգրեմ, բոլոր ունեցած չունեցածս դրան կըտամ, ձեր ապրուստն էլ կրնողամ:

Ծնողաց համար շատ գժւար էր համաձայնւել մի այսպիսի առաջարկութեան, մանաւանդ ծննդական մօր համար, բայց որովհետև իրանք աղքատ էին, չըդիտէին՝ ինչ անեն, տան թէ չըտան: Հաւարւեցին դրացիները և ա-

մեն կողմից սկսեցին համոզել ծնողներին, որ իրանց որդու բախտաւորութեանը արգելք չըլինեն: Առանց դրան էլ զաւակներ շատ ունէք—ասացին նրանք—և էլի կունենար. դուք հազիւ նրանց կարող էք պահել. այդ մէկն էլ տըւէք այս պարոնին, թող գնայ. հարուստ մարդ կը դառնայ, ձեզ էլ կըհարստացնէ:

Սրա վրայ ծնողքը յօժարեցան և երեխային մի քանի ոսկով տըւին սովորաբարին:

Սովորաբը տարաւ երեխային իր քարւանը և ճանապարհ ընկաւ դէպի իր զնալու աշխարհը: Շատ զնաց թէ քիչ, Աստուած զիտէ, երբ որ հասան մի ջրառատ և զեղեցիկ հովիտ, այդտեղ իշան հանգստանալու:

—Սրանից էլ թարուն տեղ չի լինիլ, մտածեց սովորաբը. հիմա ես սրան թաղել կըտամ այս հովտումը, տեսնեմ այնուհետև էլ ինչպէս պէտք է խլէ ինձանից իմ բախտը:

Կանչեց իր հաւատարիմ ծառային և ասաց.—Առ այս երեխային և տար մատաղ արա ինձ համար. միայն սիրտն ու թորը բեր ինձ:

Սովորաբը կարծում էր, որ երեխայի սիրտն ու թորը կըվերադանեն իր բախտը:

### 2.

Եղանակը ամառնային էր և տարին երաշտ: Բայց ջրաբբի և դալարագեղ հովիտը մի լեռնային տեղ էր և շատ զեղեցիկ ամարանոց խաշնարած ժողովրդի համար:

Սովորաբի ծառան երբ որ երեխային բոլորովին հեռացըց բարւանից և անցաւ մի բլրակի բամակ, այստեղ տեսաւ հօտերով ոչխարներ և սկսեց մտածել ինքն իրան...

—Ո՞չ, անիրան աղաս, ես քո անդութ հաճոյքը կատարել չեմ կարող:

Այսպէս մտածեց ծառան, և երեխային մի թփի տակ

գնելով՝ նրա պահպանութիւնը՝ յանձնեց Վերին նախա-  
խնամութեան:

Ոչխարի հօտը հեռու չէր: Ծառան դիմեց հովիւնե-  
րին, գնեց մի փոքրիկ ուլ, մորթեց և սիրան ու թոքը  
հանելով՝ տարաւ իր աղային: Սովորաբարը խորովեց, կե-  
րաւ և միամտելով՝ շարունակեց ճանապարհը:

## 3.

Ոչխարի հօտը կամաց-կամաց սփռւելով հովտի մէջ,  
հասաւ այն թփին, ուր զրած էր երեխան: Մի կթի այ-  
ծի ծծեր այնքան լցւել էին, որ քիչ էր մնում տրաքէին.  
մի ծծկեր կենդանի էր վինտրում որ թեժեացնել տար իր  
ծանրութիւնը: Նա որ տեսաւ երեխային թփի տակ ուվի  
պէս հեկեկալիս, իսկոյն մօտեցաւ և ծիծը զրաւ բերա-  
նին: Քաջառողջ և ուժեղ մանուկը սկսեց ծծել այնքան,  
որ բոլորվին դատարկեց այծի ծծերը: Թէ այծը և թէ  
մանուկը հաւասարապէս գոհ մնացին այս անակընկալ  
դէպքից: Այս բանը սովորութիւն դարձաւ այծի համար.  
ամենայն օր մի և նոյն ժամին, ուր էլ որ լինէր հօտը,  
նա ջոկում էր և վագում դէպի մանուկը, որ ծիծ տայ  
նրան:

Այս կթի այծը պատկանում էր մի պառաւի: Պառա-  
ւը մի քանի օր վրայ-վրայ զրկւեց կաթից. այծը զը-  
նում էր տուն դատարկ կրծքով: Ճատ նեղացաւ պառաւը  
և գնաց հովիւների հետ կռւեց:

—Դուք էք կթում իմ այծը, ասում է պառաւը և մե-  
ղաղրում հովիւներին: Խոկ հովիւները պատասխանում են.

—Երկինք, դետինք, մանք տեղեկութիւն չունենք:  
Մենք որ կթելու լինենք, քո միակ այծը չենք կթիլ, այլ  
նրանցը կըկթենք, որոնք մէկի տեղ մի քանիսն ունեն:  
Բայց քո այծը սովորութիւն է արել յանկարծ անցայտա-  
նալու: Մէկ էլ նայում ենք որ չըկայ, ուր է զնում—չը-

դիտենք: Կուգես, մէկ օր եկ, դու ինքդ տես աշքովդ, որ  
հաւատաս:

Պառաւը մէկ օր այծի հետ գնաց ոչխարը և աշքը  
չըհեռացրեց նրանից: Կէսօրի մօտ ժամանակը, երբ այծի  
կուրծքն արդէն լցւել էր, նա սուս ու փուս քաշւեց գէ-  
պի մանուկը: Պառաւն սկսեց հետեւ նրան: Այծը կանգ  
առաւ մի թփի տակ և երկար մնալուց յետոյ վերադար-  
ձաւ դատարկ կրծքով: Պառաւը մօտեցաւ թփին և տեսաւ  
մի հրաշագեղ երեխայ: Պառաւի ուրախութեանն էլ չափ  
չըկար:

—Այս լաւ դառաւ, ասաց նա. Եթէ մի քանի օր կա-  
թից զրկւեցի, զրա փոխարէն Աստած ինձ մի որդի  
տըւաւ. կըտանեմ, կըպահեմ, կըմեծանայ, ինքն էլ ինձ  
կըպահի: Գրկեց երեխային, տարաւ մօտիկ վտակում խըշ-  
խըշալի լողացրեց, վաթաթեց իր չարսաւում և ստէպ  
ստէպ համբուրելով՝ տարաւ տուն: Տղան մեծացաւ և ի-  
րաւի, դառաւ պառաւի ծերութեան նեցուկը, նրա պա-  
հապանը: Եւ որովհետև սկզբում այծն էր պահպանել նը-  
րան, այդ պատճառով նրա անունը զրին Այծ ա տ ո ւ ր,  
ասում էին և «Այծի տղայ» մականունով:

## 4.

Այծատուրը դառել էր արդէն տասնըվեց—տասնըեռթը  
տարեկան և մի հրաշագեղ, խելօք, ժրաշան և ամենին  
սիրելի երիտասարդ էր: Այս միջոցներին սովորաբարը մած  
քարտանով եկաւ իջաւ այս գիւղումը: Հիւրասէր գիւղացիք  
շըշապատեցին սովորաբարին և մեծ պատով ընդունեցին:  
Ամենից առաջ նրա ձիու կապը բոնեց Այծատուրը, օդ-  
նեց նրան իջնել ձիուց և ինքն սկսեց ձին ման ածել, որ  
հանգստացնէ հոգնածութիւնից: Երբ որ ձին կապեց  
և խոտ տւաւ, սկսեց իրան սովորաբարին ծառայել և կե-  
րակուր պատրաստել: Սովորաբարին շատ դիւր եկաւ Այ-  
ծատուրը. նրա քաղաքավարի խօսք ու զրոյցը, շաբժ-

մունքը, ճարպիկութիւնը սովորաբարի ուշադրութիւնն այնպէս զրաւեցին, որ ուզեց նրան իր մօտ վերցնել: Սկսեց հարց ու փորձ անել և տղան պարզմտութեամբ պատմեց իր ծագումը, ինչպէս որ լսել էր, և իբրև ապացոյց իր ասածի ճշմարտութեան, վկայ բերաւ իր Այծատուր առունը:

Սովորաբարն իսկոյն մատը կծեց.—Հըմ, ասաց իր մտրումը, սա իմ վերցրած մանուկը պէտք է լինի, և հէնց այստեղ էլ հրամայեցի, որ սպանեն նրան, բայց բանից դուրս է զալիս, որ ծառաս չի կատարել իմ հրամանը, և հէնց տարիքն էլ համապատասխանում են նոյն տարւան:

—Այծատուր որդի, ասաց սովորաբարը, կուզես ինձ մօտ մնալ. ես քեզ կընշանակեմ զլխաւոր վերակացու իմ բոլոր ունեցած-շոնեցածի վրայ. դու խելօք տղայ ես երեսում, լաւ աւզագայ կունենաս.

—Ես այդպիսի բախտից փախչող չեմ, ասաց Այծատուրը. երբ որ դուք այդշափ ողորմած և բարի կընիք դէպի ինձ, ես էլ կաշխատեմ երախտահատոյց լինել և յոյս ունեմ, որ ամօթով չեմ մնալ ձեզ մօտ:

Ինչ ասել կուզի, որ սովորաբարի նպատակը չար էր: Նա ոչ թէ Այծատուրի բախտը, այլ նրա անրախտութիւնն ու մահն էր ուզում:

Այծատուրը յուսադրելով իր ինամակալ պառաւին, որ շուտով յետ կըդառնայ և նրան մենակ չի թողնիլ, մնաս բարև արաւ, դնաց սովորաբարի հետ:

### 5.

Մեծ հարստութեան տէր էր սովորաբարը: Երբ որ նրա քարւանի ծայրը բացւում էր, էլ վերջը չէր կտըրւում: Հաղարաւոր ուզեր, ձիանք և չորիք միայն նրա վաճառքն էին մի քաղաքից միւս քաղաք տեղափոխում: Ի՞նչ ճոթեղին, ինչ ակնեղին, ինչ մրգեղին ու համեմունք ա-

մես, որ նա չունենար: Ով ինչ ունէր ծախելու, նրա առնելուն էր սպասում, ով ինչ գնելու ունէր, նրա ապրանքի գալուն էր սպասում: Երբ որ տանից դուրս էր զալիս, էլ տարիներով չէր վերադառնում. պատահում էր, որ ամիսներով ճանապարհ էր զնում, օրինակ՝ Հնդստանից մինչև Խորասան, Խորասանից մինչև Թիֆլիս, Թիֆլիսից մինչև Հաշտարխան: Տուն ունէր ինչպէս թագաւորական պալատ. շահերն ու սուլթանները նրանից էին փող պարտք անում, նրա թանգագին ընծաներին սպասում:

Նա կին ունէր, բայց արու գաւակ չունէր, յայլ մի աղջիկ միայն, որ ինչքան զեղեցիկ էր, նոյնքան և բարի ու խելօք. Գոհարիկ էր անունը և արդէն տասնընդինդ տարին լրացրած մի նախանձելի հարսնացու էր:


Սովորաբարն այժմ իր քարւանով դէպի տուն էր վերադառնում և հինգ օրից յետոյ պիտի հասնէր: Մի նամակ զրեց, տըւաւ Այծատուրին և մի լաւ ձի տալով՝ ասաց.

—Այս նամակը կըհասցնես մեր տուն և քո ձեռքով կըտաս իմ կնոջը:

Այծատուրը, որ մի առիթ էր որոնում իր պարոնի հրամանը մասերմութեամբ և անյապաղ կատարելու, նամակը ծոցումը դրաւ և ձին նստեց թէ չէ թե առաւ թուաւ դէպի սովորաբարի տունը:

Միւս օրը ճաշի ժամանակ հասաւ սովորաբարի տունը: Ամառն էր. բաւական շոք օր էր: Իջաւ ձիուցը, ձին կապեց մի ծառի ստերում, իսկ ինքը մօտեցաւ տան դռան: Տեսաւ զուռը կողբած է, էլ չուզեցաւ անհանգտացնել ներսը եղողներին. թեք ընկաւ պատի տակին և սաստիկ հոգնածութիւնից ու անքնութիւնից իսկոյն քունը տարաւ:

Մեր Այծատուրը այսպէս քնի մէջ ով զիտէ ինչ էր տեսնում երագումը, բայց արեգակի այրող ճառագայթների տակ կարմրել էր և քրտնել այնպէս, ինչպէս մայիսի կարմրի վարդը մարգարտեայ ցօղի կաթիլներով: Իր այս պատկերով նա ուզիդ Գոհարիկի սենեակի պատուհանի



գիմայն էր: Ով զիտէ, ինչ անյայտ դրդումից ստիպւած,  
Գոհարիկը բաց արաւ սենեակի պատուհանը և յանկաբ  
որ շըտեսաւ Այծատուրի ցօղաթաթախ վարդագեղ զէմքը,  
մնաց տեղն ու տեղը մեխւած, իր կեանքումը տեսած չէր  
մի այսպիսի հրաշագեղ պատկեր: Էլ աչքը շըհեռացրեց.  
Հանգամանքը յաջող էր, որովհետև իրան դրաւող երիտա-  
սարդը քնած էր և կարող չէր տեսնել նրան: Այսպէս որ  
շատ նայեց Գոհարիկը, մի նամակի ծայր նշմարեց տղա-  
յի ծոցից դուրս եկած, յետոյ էլ տեսաւ ձին և ճանաչեց:

— Սրան անպատճառ իմ հայրս կրկինի ուղարկած իր  
գալուստն իմաց տալու, ասաց աղջիկն իր մտքումը և տ-  
ուանց երկար մտածելով՝ իջաւ վերեից և Այծատուրի ծո-  
ցից նամակը կամացուկ դուրս քաշեց ու կրկին թռաւ  
գէպի վեր՝ իր սենեակլը:

Գոհարիկը բաց արաւ նամակը և կարդաց հետեւեալը —

### ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍԻՆ,

«Այս զրաբեր երիտասարդը քեզ մօտ հասնի թէ չէ,  
« սիրով կընդունես, որ ոչ մի կասկո ծ չըտանէ, եւ սրով  
« կըլինի թէ հրով, թոյնով կըլինի թէ պարանով, անյա-  
« պաղ վերջ կըտաս դրա կեանքին: Ես հինգ օրից այդ-  
« տեղ կըլինեմ եւ դրան շըպիտի տեսնեմ կենդանի:

Ք ո ա մ ո ւ ս ի ն ա :

Գոհարիկը կարդաց այս նամակը և իր ոչ աչքերին  
և ոչ ականջին շըհաւատաց: Ո՞չ, երեի հայրս ուղեցել է  
զրել ահա ինչ — և սկսեց զրել հետեւեալը —

### ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍԻՆ,

«Այս զրաբեր երիտասարդը քեզ մօտ հասնի թէ չէ,  
« իսկոյն իժ Գոհարիկս դրան կըտաս եւ կըպսակես այն-  
« պէս, որ մինչեւ իժ զալս ամեն ինչ վերջացած լինի:

Ք ո ա մ ո ւ ս ի ն ա :

Գոհարիկն այս նամակը դրեց կարծես անգիտակցար, առանց իրան որ և է հաշիւ տալու և տարաւ դրաւ Այծատուրի ծոցումը։ Այս գործողութիւնը կատարելուց յետոյ Գոհարիկը սուս ու փուս վեր բարձրացաւ, այրեց իր հօր նամակը և որպէս զի Այծատուրին երկար չը թողնէ արեի տակ, ուրախ-ուրախ ներս մտնելով մօր սնեակը՝ ասաց.

—Մայրիկ, նայիր, մնր գուանը մի անծանօթ երիտասարդ կայ քնած։ Նա ձիով է եկել, իսկ ձին հայրիկինն է. ուրեմն նա մի լրաբեր պէտք է լինի։ Հարկաւոր է նրան զարթեցնել և վեր կանչել։

Ծառաները ուրիշ տեղ էին գնացել, տանը ոչ ոք չը կար, բացի մօրից և աղջկանից։ Մայրը իշաւ ներքեւ և Այծատուրին զարթեցրեց։

Այծատուրը ներողութիւն խնդրեց տիրուհուց և ծոցիցը նամակը հանելով տրւաւ իրան։

Տիրուհին նամակը կարդաց և տղայի երեսին նայելով մի առանձին ուրախութիւն և հաճոյք զգաց։

—Դու զիտէս՝ այս նամակումն ինչ է զրած, հարցրեց տիրուհին։

—Ո՛չ, ինձ յայտնի չէ, տիրուհի։

—Երեսով է, որ յայտնի չէ, եթէ ոչ էլ ինչ կրտանէր քունըդ։ Գնանք վերեւ, ես այնտեղ քեզ կըսյայտնեմ, թէ ինչ է զրած։

Տիրուհու նպատակն էր տեսնել թէ ինչ ներդործութիւն կանէ աղջկայ վրայ հօր կամքը։

Տիրուհու սիրալիր ընդունելութիւնը բաւական քաջութիւն տրւաւ Այծատուրին, թէն նա առանց այս էլ իր հոգեկան անմեղ վիճակից դուրս չէր կարող դալ. նա ոչ ամօթխած էր և ոչ յանդուզն. ազատ էր երկու ծայրերից էլ, իրքեւ բնութեան անարատ զաւակ։

Երբ որ վերեւ բարձրացան, նրանց զիմաւորեց Գոհարիկը և սկսեց հարց ու փորձ անել հօր մասին, նրա առողջութեան, իսկ մօրից հարցրեց, թէ ինչ է զրել հայրը։

Այծատուրը միայն հէքիաթներումն էր լսած Գոհա-

րիկի նման զեղեցկուհիների մասին, և ինքն իրան շատ երջանիկ զգաց, որ այնպիսի մի զիցուհու նըւաստ ծառան պիտի լինի։ Նա չէր կարող մտքովն անդամ անց-կացնել, որ կարող է ծառայից էլ աւելի բարձր լինել և նրան իրան կողակից և լծակից համարել։

—Անունըդ ինչ է, որդի, հարցրեց տիրուհին։

—Ասծատուր է, —պատասխանեց տղան, Այծատուր անունից ամաչելով։

—Աստւածատուր... Գիտէս, Աստւածատուր, իմ ամուսինս զրել է, որ դու զաս թէ չէ իմ աղջիկը քեզ տամ. սա է ահա իմ աղջիկը։ Ես չեմ կարող ընդդէմ կենալ նրա կամքին և իմ կողմից արգելք չըկայ. բայց եթէ դու կամ սա յօժար չէր լինիլ, այդ բանումը ես մեղաւոր չեմ լինիլ, պատասխանատուն գուք կըլինէք։

Այս ասելով տիրուհին նամակը տրւաւ աղջկանը։

Այծատուրը այնպէս կարծեց, թէ երազումն է տեսնում այս անցքը, մնաց լուռ և վեր բաշւած, ոչինչ չըկարաց խօսել։ Իսկ Գոհարիկն ասաց։

—Ես հնազանդ եմ իմ հօր կամքին, բայց չեմ կարող բռնութեամբ տիրել մի երիտասարդի սրտի վրայ. զուցէ նա համաձայն չէ։

Այծատուրը տեսաւ, որ իր տեսածը երազ չէ և ոչ հանաք են անում իր հետ, բոլոր ուժը մի տեղ հաւաքելով՝ ասաց.

—Ես ոչ պակաս հնազանդ եմ իմ տիրոջ կամքին. նա որ ինձ հրամայէ թէ զնա ջուրն ընկիր, կընկնիմ, ուր մնաց որ նա ինձ ջուրը չի ձգում, այլ հանում է ջրից։

—Ուրեմն ամեն ինչ վերջացած է, ասաց տիրուհին և կանչեց ծխատէր հոգեորականին, որին ցոյց տալով իր ամուսնու նամակը՝ խնդրեց, որ շուտով պսակի ծէսը կատարէ։

գաւիթը մտաւ, տեսաւ Այծատուրին իր աղջկայ հետ ուրախ գւարժ ճեմելիս իր հոյակապ տան պատշամբի վրայ:

— Այս ինչ խաղ է, մտածեց նա.—երեսում է, որ իմ գրածի հակառակ սա ամուսնացել է իմ աղջկայ վրայ: Ռւրեմն ես էլ ինձ այնպէս ցոյց կըտամ, որ իբր թէ իմ կամքն էլ այդպէս է եղել: Ներս մտաւ ուրախ զրւարժիք, բարեեց ամենքին և դառնալով տղային ու աղջկան՝ հարցրեց կնոջ՝ արգեօք կարող եմ շնորհաւորել:

— Այ՞ս, այ՞ս, ասաց կինը.— ինչպէս որ զրել էիր, թէ մինչեւ իմ գալս պատկած պրծած լինեն, ես էլ անյապաղ կատարեցի քո կամքը:

Այստեղ մարդը գլխի ընկաւ, որ իր նամակի բովանդակութիւնը փոխւած է, և կասկած տարաւ Այծատուրի վրայ, թէ նա ինքը կըլինէր փոխած և մտածեց վրէժինդիր լինել:

Միւս օրը գնաց իր այգին և այգեպանին պատիրեց մի խոր հոր փորել և ամբողջ զիշեր կրակ վառել նրանում. իսկ վաղը առաւօտեան, ասաց, մի մարդ կուղարկեմ այստեղ. հէնց մտնի թէ չէ, բռնեցէր և ձգեցէր նոյն հորի մէջ և վրան նոր ցախ ածեցէր և այրեցէր:

Սովորաբն ինչպէս ասաց, այգեպաններն էլ այնպէս պատրաստեցին:

## 7.

Երեկոյեան ընթրիքի ժամանակ սովորաբը դառնալով Այծատուրին՝ ասաց.

— Ես թէպէտ զրեցի, որ պսակն առանց ինձ կատարւի, բայց հիմա տեսնում եմ, որ շատ եմ շտապել: Այդ նրա համար արի, որ ինձ շատ դիւր եկար: Ի՞նչ կասեն բաղաքացիք. չեն ասիլ, թէ ինչու ժլատութիւն արաւ և պսակն առանց հրաւէրքի կատարեց: Վաղը պէտք է մեծ հրաւէրք սարքեմ և ես ինքս կըտեսնեմ բոլոր պատրաստութիւնը: Քեզ կըխնդրեմ միայն, որ զնաս այ-

դին և այնտեղ թարմ մըզեղէնի պատրաստութիւնը ինքզ տեսնես. չըմոռանաս նաև թարմ ծաղիկներից բազմաթիւ փունջեր շինել տալ:

Միւս օրը Այծատուրը վեր կացաւ, պատրաստեց որ զնայ այդի: Աանապարհին, աղօթատան մօտովն անցնելիս, միտն ընկաւ, որ օրը կիւրակի է և ամբողջ ժողովուրդը աղօթքի է կանգնած:— Գնամ, ես էլ կատարեմ իմ աղօթքը, Աստըծուն փառաբանութիւն տամ. զեռ վաղ է, չեմ ուշանալ ճաշւայ համար հարկաւոր եղածը պատրաստել:

Այծատուրը մտաւ աղօթատուն և երկար մնաց այնտեղ:

Սովորաբի սիրտը տըլքիում էր անհանդստութիւնից. Նրա համար մի ժամը տարու շափ երկարանում էր: Մի երկու ժամից յիտոյ շտապեց զէպի այգին, որ տեսնէ՝ իր հրամանը կատարւած է արգեօք: Այգին մտաւ թէ չէ՝ նբան ցիմ-ցիմ վերցրին այգեպանները և ձգեցին հրաբորքոք հորի մէջ և խոկոյն նորանոր ցախ ու փայտ թափեցին մէջը: Դեռ հորը շընկած՝ շատ աղապակեց, թէ ես ձեր տէրն եմ, ձեր աղան եմ, բայց ոչ որ շըլսեց, կարծես ամենքն էլ խլացել ու կուրացել. Էին:

Այս զէպքից երկու ժամ անցած՝ Այծատուրը գնաց: Նրան ընդունեցին իրեք իրանց տիրոջը և յայտնեցին, որ նրա հրամանը կատարւած է:— Ի՞նչ հրաման, հարցրեց Այծատուրը և իմացաւ, որ սովորաբն ընկել է ուրիշի համար փորել արւած հորը:

Այստեղ հէրիաթարաններն ասում են, թէ այգեպանների աշքումը Այծատուրն իրանց տիրոջ նման էր երեացել, իսկ սովորաբը մի ուրիշի: Ասում էլ են, թէ ճակտի զըլածը չի չնշւիլ, և ուրիշի համար հոր փորողը ինքը կընկնի նի նրա մէջը:



## ԶԱՆԳԻ-ԶՐԱՆԳԻ

1.

Մարդ ու կնիկ մի տղայ ու մէկ աղջիկ են ունենում։ տղան հասած է լինում արդին, իսկ աղջիկը գեռ բարուրումն է լինում։ Այս աղջիկը գեռ հաղիւ հինգ ամսական եղած, սրանց տանը տարօրինակ բաներ են պատահում։ Երբ ոչ որ չի լինում տանը, բացի ծծկեր աղջկանից, գալիս տեսնում են որ շատ ուտելու բաներ կան պակասած։ Բաղիով կաթն է լինում դրած, տեսնում են դատարկւած։ մածուն է լինում, — նոյնպէս. տաշտումն էլ հաց չի մնում, բղուղներումը՝ իւղ. այսպէս և ուրիշ շատ բաներ. կարծում են որ զող պիտի մտած լինի տուն, բայց տղան ուրիշ բան է մտածում և ոչ ոքի բան չի ասում։

Մէկ անգամ, երբ ոչ ոք չի լինում տանը, տղան թաք է կենում մի մութ քնջնում և տեսնում է որ ինչ. — ահա իր ծծկեր բոյըը վեր կացաւ, թողած բաժինը կուլ տրւաւ, ընկաւ տաշտի վրայ, տեսաւ հաց շրկայ, այլ միայն խմոր է հունցած, ընկաւ խմորի վրայ և տաշտը մաքուր սըրեց. յետոյ ընկաւ դէս ու դէն, շատ հոտոտաց, տեսաւ՝ էլ բան շրկայ, սուս ու փուս գնաց իր տեղը պառկեց, ինչպէս մի անմեղ երեխայ։

Մայրը դուրս էր գնացել թոնիրը վառելու. երբ որ եկաւ որ խմորը գնդէ, տեսաւ՝ խմոր շրկայ։ Տղան դուրս եկաւ մի անկիւնից, մօրը դուրս կանչեց և պատմեց նըրան, ինչ որ տեսել էր աշքովը։

Մայրը շրհաւատաց, թէ ինչպէս կարելի է, այդպէս բան չի լինիլ։

**Տղան ասաց.** — Ուրեմն դուք գիտէք. այդ դուք, այդ ձեր աղջիկը. ինչ կուգէք՝ արէք. ես այս տանը չեմ կարող մնալ. դա որ մի քիչ էլ մեծանայ, մեզ ամենքիս էլ կուտի. դա զե է, դա վիշապ է և ոչ թէ աղջիկ։

Այս ասաց տղան ու հեռացաւ իրանց տանից։ Քիչ որ հեռացաւ իրանց տանից, ճանապարհին նստեց։ Քաղցած էր, ուտելու հաց չունէր, մի քանի հատ չորցըրած ծիրան ունէր ջէրումը, հանեց կերաւ և կորիզները թաղեց այնտեղ։ Այդ կորիզներից երեք ծիրանի ծառեր դուրս եկան յետոյ։

2.

**Տղայի անունը Թաթուխը էր.** Թաթուխը գնաց ընկաւ չուէչօլ, որ դուրս գայ մի ուրիշ աշխարհն, բայց ոչ բաղար գտաւ, ոչ գիւղ. տեսաւ՝ մի հովտի մէջ ոչխարներ են արածում, գնաց դէպի այն կողմը։ Գնաց տեսաւ, որ ոչխարների մօտ հովիւ շրկայ։ Երեկոյեան դէմ, երբ ոչխարի հօտը թերւեց դէպի իր վարախը, Թաթուխն էլ նըրանց հետ գնաց։ Երբ որ հօտը վարախն հասաւ, մէկ մարդ ու կնիկ դուրս եկան մի քարայրից, երկուսն էլ կոյր, կլթեցին իրանց ոչխարները շօշափելով, իրանց ուտելու բաժինը վերցըրին մի ջոկ ամանում, տարան հաց բրդեցին մէջը և սկսեցին ուտել։ Թաթուխը կամաց մօտեցաւ բրդած ամանին և մի կողմից էլ ինքն սկսեց ուտել։ Կոյրերը շիմացան, որ մի նոր հացըրնկեր ունէին, և թէկ շլկտացան այս անդամ, բայց ձայն շրհանեցին։ Այս բանը կըկնեց մի քանի անդամ։ Մէկ օր էլ մարդն ասաց կնկանը.

— Այ կնիկ, այս քանի օր է, ես քաղցած եմ մնում. կաթն ամեն օրւայ չափ է լինում, բայց ես չեմ կշտանում։

Կնիկն էլ ասաց.

— Այ մարդ, ես կարծում էի, թէ դու սովորականից շատ ես ուտում, ինդուր եմ ես քաղցած մնում. ուրեմն

յենք երկուսս էլ քաղցած ենք մմում. շըլինի թէ մի ու-  
րիշ մարդ մասնակից է լինում մեր սեղանին:

—Ըատ հաւանական է, որ այդպէս լինի: Ես մի ու-  
րիշ բան էլ եմ նկատել: Մինչև հիմա ոչխարները մենք  
էինք տուն քշում, բայց հիմա իրանք իրանց են ներս  
գնում. երես մի քշող կայ նրանց: Դիտե՞մ՝ ի՞նչ է. հաց ու-  
տելիս, երբ որ ես կըհազամ, զու խոկոյն երկու ձեռքդ  
մեկնիր, ես էլ միւս կողմից կըպարզեմ, և այսպիսով, եթէ  
մեր կողքին մարդ լինի, կըզբենք նրան:

Երեկոյին հաց ուտելիս մարդ ու կնիկ կատարեցին  
իրանց պայմանը և մեր Թաթուխին իրանց ճանդը զցեցին:

—Ո՞վ ես զու, ասացին, ինչո՞ւ ես քեզ թաքցնում  
մեղանից:

Թաթուխին ասաց.—Ես մի օտարական մարդ եմ, ե-  
կել եմ ձեր օջախն եմ ընկել. զուք եղէք ինձ հայր ու  
մայր, ես կըլինիմ ձեզ որդի, հովութիւն կանեմ և ձեզ  
կըպահպանեմ:

—Ըատ լաւ. ասացին, ուրեմն քեզ հէնց Աստած է  
ուղարկել մեզ համար. մենք զաւակ չունինք, զու եղիք  
մեզ որդի:

### 3.

Միւս օրը հայրը Թաթուխին պատեր տրւաւ և ա-  
սաց.

—Լսիր, որդի. երբ ոչխարը կըտանես արածեցնելու,  
ոչ ձախ կողմի սարը կըտանես և ոչ աչ, այլ ուղիղ մեր  
դէմուդէմի սարը կըտանես:

—Ըատ լաւ, ասաց Թաթուխը, բայց հօր պատէրը  
չըկատարեց: Երկրորդ օրը հօտը քշեց ձախակողմնան սա-  
րը և հանդիպեցաւ այնտեղ մի դիւտական հարսանիքի: Հա-  
ւաքւել էին բոլոր քաջքերը և զունով ու դափով հար-  
սանիք էին անում: Մրանք որ տեսան Թաթուխին, գնա-  
ցին բոնեցին և քաշ տրւին տարան իրանց խնջողը: Ա-

սացին.—Տեսնում ես հարսանիք է, մենք ամենքս դրադ-  
ւած ենք, պէտք է մեզ համար փայտ կոտրտես:

Թաթուխը յօժարեցաւ, և կացինը ձեռքն առած,  
սկսեց ճեղքել մի ահազին գերան: Հինց որ գերանի ճեղքը  
բաց արաւ մի քանի սեպով, կանչեց բոլոր քաջքերին, թէ—  
եկէք, եկէք, շուտ արէք, ձեզ մի նոր օյին ցոյց տամ, որ  
ձեր հարսանիքի խնդութիւնը աւելի կատարեալ լինի: Հա-  
ւաքւեցին բոլոր քաջքերը, նոյն իսկ փեսացուն ու հարս-  
ացուն էլ:—Աբա, ասացին, ի՞նչ օյին պիտի ցոյց տաս:

Թաթուխն ասաց.—Զեռքներդ դրէք այս ճեղքումը,  
ես յետոյ ցոյց կըտամ:

Սմենքն էլ շտապելով ձեռքները դրին գերանի ճեղ-  
քումը, որ շուտով տեսնեն օյինը:

Թաթուխն իսկոյն սեպերը հանեց, և բոլոր քաջքերը  
միաբերան սկսեցին աղիողորմ օռնալ:

—Վայ, վայ, կոտորւեցինք, այս ի՞նչ արաւ այս մար-  
դը. միթէ այսպէս օյին կըլինի:

Թաթուխն ասաց.—Այդ զեռ առաջաբանն է, օյինը  
յետոյ պէտք է լինի:—Ասացէք, զուք էք հանել իմ հօրն  
ու մօր աշքերը և որտեղ էք պահել... Մինչև նրանց աշ-  
քերը շրտար, ձեզ փրկութիւն չըկայ:

—Այն, այն, վայ, վայ, ասաց մէկը, որի սիրտը ա-  
մենից շատ էր կսկծում ցափց... Ահա այնտեղ է, այն-  
տեղ, այն թփի տակին, գնա վերցուր և ազատիր մեզ:

Թաթուխը գնաց վերցրեց աշքերը և եկաւ հարցընեց.

—Աշքերը զտայ, բայց ի՞նչպէս պէտք է սաղացնեմ:

—Աշքերը կըդնես իրանց տեղը և մեր նորահարսի  
աղլուխովը կըշըփես, իսկոյն կառողջանան:

Թաթուխը գնաց վերցրեց նորահարսի աղլուխը:

—Դէ, հիմա պատիր մեզ, աղաղակեցին ամենքը:

—Կազատէի, բայց ո՞վ է երաշխաւոր, որ դուք ձեր  
վրէժը չէք լուծիլ և մեծ պատառս ականջս չէք թողնիլ:  
Զէ, այդ յոյսը մի ունենաք, ինձանից ձեզ փրկութիւն չը  
կայ, լացէք ձեր սև օրը:

Դեերի հարսանիքը սուզի փոխւեց: Աղաշանք, պա-

դատանք չազդեցին նրա վրայ, ու ինչ խելք կլինէր, եթէ փրկէր։ Կացինը ձեռն առաւ մեր Թաթուխը և մեծից սկսած մինչև վոքրի գլուխները ջախջախեց, և այն սարը սրբեց դարանազործ դներից։

## 4.

Երեկոյին, երբ որ տուն դարձաւ, կոյրերի աշքերը դրաւ իրանց տեղը, շրփեց քաջրուհու աղուխովը և նրանը իսկոյն առողջացան։ Փաթաթւեցին Թաթուխին և վոխ առ վոխ համբուրելով, շրփիտէին՝ ինչպէս յայտնեն իրանց շնորհակալութիւնը և սրտների ուրախութեան անշափութիւնը։


Այս դէպքից սիրտ առած, միւս օրը Թաթուխն իր հօտը քշեց դէպի աջակողմեան սարը։ Հինգ որ սարի գագաթը հասաւ, մի ահազին մոնչին լսեց։ Նոյնը լսեցին և ոչխարները և զողզողալով սկսեցին յետ յետ քաշւել։ Թաթուխը շրկտրեց նրանց առաջը, բայց ուզեց ինքն աշքովը տեսնել, թէ ինչ զազան էր այդ մոնչողը։

Դնաց ձայնի ուղղութեամբ, մինչև հասաւ մի քարայրի, որի զռանը նստած մոնչում էր իրան անծանօթ մի զազան։ Եթէ ասէր՝ առիւծ է, առիւծ չէր. Եթէ ասէր՝ վազը է, վազը չէր, բայց ինչ որ էր՝ մի սարսափելի զազան էր և իր կազմւածքովը աւելի շան նմանութիւն ունէր, միայն շանից անհամեմատ մեծ։

Մինչդեռ Թաթուխը, մի բարի տակ թաք կացած զազանին էր մտիկ տալիս, զազանն արդէն վազուց էր նկատել նրան։

— է՞ յ մարդ, կանչեց զազանը մարդկային լեզով, — ես ծնունդի վրայ եմ, կարող չեմ տեղիցս շարժւել, եկ ինձ ծնեցրու, մի վախենար, քեզ մի վնաս չի լինիլ։

Երբ որ զազանը մարդու լեզով խօսեց, Թաթուխը սիրտ առաւ, ասելով մտքումը. «Մարդու լեզով խօսողը մարդու խղճմտանք էլ կունենայ, գնամ ազատեմ»։



Թաթուխը երբ որ մօտեցաւ զազանին, զազանն ասաց.—Եթէ ջուխտ ծնեմ, քեզ ուտելու եմ, իսկ եթէ կենոտ, կեանքդ քեզ կընծայեմ:

—Դու գիտես, ասաց Թաթուխը, եաւ բախտ, ինչ կը լինի, կըլինի:

Դազանի ցնկնած առաջին կորիւնը Թաթուխը ձգեց իր հովական պարկի մէջ, երկրորդը նմանապէս, երրորդից յետոյ տեսաւ, որ էլ չըկայ, այն դրաւ զազանի առաջին և ասաց.

—Ահա այս մէկն ես ցնկնել, և կարժէր միթէ սրա համար այդշափ մռնչալ:

Դազանն ամաշեց իր զազանութիւնից.—Գնաւ, ասաց, կեանքդ քեզ եմ նըւիրել, և եթէ քո հօտն այս կողմը քերես, կարող ես ապահով լինել իմ կողմից, քեզ մի վնաս չի լինիլ:

## 5.

Թաթուխը տուն տարաւ նորածին լակոտները, որոնց աշքերը դեռ խփած էին, ու նրանց կերակեց ոչխարի կաթով: Այդ լակոտները մնծացան և զառան իրրե ամենահաւատաբը շներ իր համար:

Թաթուխը նըանց մէկի անունը դրաւ Զանդի, միւսինը՝ Զրանդի: Երբ որ մի տեղ էր գնում, տանում էր հետը, իսկ տանը եղած ժամանակ, նրանց պահում էր շըթայակապ:

Սրա վրայ անցաւ տասը տարի կամ մի քիչ աւել կամ պակաս, այդ Աստւած գիտէ. Թաթուխն ուզեց գնալ դէպի իր ծննդարանը, որ տեսնէ՝ ի՞նչ վիճակի մէջ են այժմ իր ծնողները: Իր այս միտքը յայտնեց իր նորն ու մօրը, նրանք էլ կամք տիին այն յուսով, որ շուտով կըվերադառնայ: Թաթուխը մի աման կաթով լցրեց, դրեց թարեքին և իր հօրն ու մօրն ասաց.—Նայեցէք այս կաթին. Երբ որ տեսնէք՝ գոյնը փոխել է, կարմրել է կամ

սեացել, իմացէք, որ ես մի նեղութեան մէջ եմ, իսկոյն կարձակէք իմ Զանդին ու Զրանդին, նրանք ինձ օգնութեան կըհասնեն:

Թաթուխը գնաց և հասաւ երեք ծիրանի ծառերին, որոնք արդէն շատ բարձրացել և ահագին կոկ ծառեր էին դառել: Իջաւ այդտեղ, փոքր ինչ հանդստացաւ և յետոյ գնաց իր ծննդարանը: Ի՞նչ ծննդարան... Էլ ոչ մի շունչ չըկար կենդանի. ամբողջ գիւղը մնացել էր կանգուն, բայց մէջը բնակիչ չըկար: Թաթուխը ձիով էր գնում, հետն էլ մի խուրջին ունէր ճանփի պաշարով լիքը: Զին քշեց ուղղակի դէպի իրանց տուն և իջաւ գուանը: Մտաւ ներս, և, ով հրաշք, տեսաւ իր քոյրը նստած իրանց օջախի առջև, և ուրիշ ոչ ոք: Քոյրը վեր կացաւ, փաթաթւեց եղբօր շմբին, ասելով.

—Դու բարնվ ես եկել, հազար բարով, իմ եղբայր, իմ աշքիս լոյս, ուր էիր, ինչու ուշացար այսքան: Այս ասաց քոյրը և շտապով դուրս եկաւ դուռը:

Տեսաւ ձին կապած, խուրջինը վրան: Խուրջինն ամբողջ կու տրւաւ և ներս գնաց եղբօր մօտու հարցըեց.

—Եղբայր ջան, քեզ մատաղ, առանց խուրջինի ես եկմէլ:

—Այո՛, պատասխանեց Թաթուխը, և իսկոյն հասկացաւ որ խուրջինը կու է տրւել:

Քոյրը մէկ էլ դուրս եկաւ և ձիու մէկ ոտը կերաւ ու ներս գալով հարցըեց.

—Եղբայր ջան, քեզ մատաղ, ձիու երեք ոտով ես բերեմէլ:

—Այո՛, պատասխանեց Թաթուխը:

Քոյրը դուրս գնաց և ձիու երկրորդ ոտն էլ կերաւ և ներս գալով հարցըեց.

—Եղբայր ջան, քոյրդ քեզ մատաղ, ձիու երկո՞ւ ոտով ես բերել...

—Այո՛, պատասխանեց եղբայրը:

Քոյրն շտապով դուրս գնաց և երրորդ ոտը կերաւ,

և էլի ներս գալով հարցըեց.

—Եղբայր ջան, ձիու ոտքով ես բերել:

—Այն, ասաց Թաթուխը, որի սիրտն արդէն սկսել էր դողղողալ: «Զին ուտելուց յետոյ պիտի ինձ էլ ուտի. ինչ պիտի անեմ ես, ինչպէս պիտի ազատւեմ», մտածում էր նա:

Քոյրը դուրս գնաց, չորրորդ ոտքն էլ կերաւ, էլի ներս եկաւ և հարցըեց.

—Եղբայր ջան, ոտքով ես եկել:

—Այն, քոյրիկ ջան, ոտքով եմ եկել, ոտքով էլ պիտի գնամ, բայց չըգիտեմ, պիտի թողնես թէ ոչ:

—Վույ, քուանամ ես, եղբայր ջան, ինչպէս կըթողնեմ. ահա քանի տարի է աշքս քո ճանապարհին է, թէ երբ պիտի եղբայրս գայ, որ սրտիս մէջ տեղ տամ նրան: Ով գիտէ քաղցած ես, սպասիր, ես գնամ քեզ համար հաց բերեմ:

Քոյրը դուրս գնաց թէ չէ, տան անկիւնից մի աքաղաղ դուրս եկաւ և ասաց Թաթուխին.

—Այ տղայ, քոյրդ գնաց ատամերը սրելու, որ գայ քեզ ուտի. ճար ունիս, տես:


—Ի՞նչ ճար անեմ, չըգիտեմ, ասաց տղան:

Աքաղաղն ասաց.—Մուշտակը հանիր, մէջը մոխրով լցըռու, հերթիցը կախ արա, ինքդ դուրս եկ, փախիր: Նա կըգայ՝ կընկնի մուշտակիդ վրայ, աշքերը մոխրով կըլըցնւեն. մինչև նա աշքերը կըմարըէ, դու բաւական տեղ գընացած կըլինիս:

Ինչպէս ասաց աքաղաղը, տղանէլ այնպէս արաւ ու փախաւ:

Աղջիկը եկաւ, տեսաւ՝ եղբայրը չըկայ, մուշտակն ընկաւ աշռովը, կարծեց՝ նա ինքն է եղբայրը. զագանի պէս վրայ ընկաւ, քըրքեց, մոխիրը թափւեց վրան և աշք ու բերան լցըռեց: Տեսաւ որ խարւած է, սաստիկ կատաղեց, շուտով թափ տրւաւ մոխիրը, աշքերը սրբեց և վագեց եղբօր ետևից:

Թաթուխը բաւական հեռացել էր. յետ մտիկ տւաւ,



տեսաւ քոյրն արդէն հասւէհաս է, ինքն էլ ջանք արաւ, հասաւ ծիրանի ծառերին և մազլցեց մէկի վրայ:

Քոյրը հասաւ, փորձեց ինքն էլ բարձրանալ ծառը, չըկարողացաւ, սկսեց ատամներով կրծել ծառի բունը և այնքան կրծեց, որ բոլորովին կտրեց: Կտրած ծառն ընկաւ երկրորդ ծառի վրայ, տղան էլ նոյն ծառի ծայրին նստեց: Աղջիկն սկսեց կրծել երկրորդ ծառը: Սա էլ կոտրւեց, ընկաւ երրորդ ծառի վրայ: Աղջիկն սկսեց կրծել երրորդ ծառը:

Այս միջոցին թաթուխի հայրագիրն ու մայրագիրը նայեցին նշան դրած կաթին, տեսան որ կարմրել է, իսկոյն արձակեցին Զանդի-Զրանդին: Մտերիմ գաղաններն իսկոյն գտան իրանց տիրոջ հետքը, տեսան թէ ո՞ր կողմն է գնացել և ի՞նչ ճանապարհով. հսկայական ոստիւններ անելով մի ակնթարթում հասան իրանց տիրոջը: Վերջին ծառն արդէն ընկնելու վրայ էր, երբ որ նրանք հասան: Թաթուխը նրանց տեսաւ թէ չէ՝ կանչեց վերևից.

—Զանդի-Զրանդի. հէնց հուփ տըւէք, հէնց կու տըւէք, որ մի պուտ արիւն կաթի:

Նրանք էլ այնպէս հախուցին աղջրկանը և այնպէս կու տըւին, որ միայն մի պուտ արիւն կաթեց մի տերկի վրայ:

Տղան իջաւ ծառիցը, Զանդի-Զրանդին փաթաթւեցին նրա ոտներին և կաղկանձելով յայտնեցին իրանց ուրախութիւնը տիրոջ ազատութեան համար: Թաթուխն էլ նրանց զլիները շփեց և յայտնեց իր շնորհակարութիւնը. յետոյ արիւնոտ տերեր վերցրեց, ծալեց դրաւ ծոցումը և ընկաւ ճանապարհ:

Չատ զնացին թէ քիչ, սրանք հանդիպեցին մի քարւանի: Քարւանի տէրը որ տեսաւ թաթուխի շները, շատ հաւանեց և ասաց մտքումը.—Եթէ այս առիւծանման շներըն իմս լինեն, էլ հարամուց երկիւլ չեմ ունենալ, հարիւր հարամի (քարւան կտրող աւագակ) էլ որ լինի, սրանք երկուսով ամենի պատասխանն էլ կըտան:

Յետոյ դառնալով թաթուխին՝ ասաց.

—Այտղայ, եկ այդ շները տուր ինձ, քանի ջորի որ ուզես, իմ քարւանից վերցրու իրանց բեռներով:

—Բոլոր քարւանդ էլ որ տաս, էլի չեմ տալ, ասաց թաթուխը:

—Ռւրեմն դու քո երկու շանով աւելի հարուստ ես, քանի թէ ես իմ ահազին քարւանով:

—Կարծեմ որ այդպէս է, պատասխանեց թաթուխը: Քո ահազին քարւանը քո կեանքը չի վրկիւ, դեռ կարող է քո մահւանդ էլ պատճառ լինել, որովհետեւ եթէ հարամիքը զան, առաջ քեզ կըսպանեն, յետոյ ապրանքով կըտանեն. իսկ իմ կեանքս ապահով է, քանի որ սրանք կան: Ուզենամ՝ այս բովէիս քո բոլոր քարւանդ ձեռփցդ կըխլիմ որանց օգնութեամբ. բայց ես հարամի չեմ, որ այդպէս անեմ:

Այսպէս խօսելով քարւական տեղ դնացին, յետոյ քարւանի տէրն ասաց.

—Ռովովհետեւ շներդ ինձ չես տալիս ոչ մի գնով, եկ ես քեզ մէկ հեշտ բան կասեմ. եթէ իմանաս, իմ քարւանը քեզ, իսկ եթէ ոչ՝ քո շներն ինձ:

Թաթուխն ասաց.—Համաձայն եմ. առա, տեսնեմ՝ ի՞նչ պիտի ասես:

—Ահա տես իմ այս ձեռիս գաւազնը. Եթէ իմանաս, թէ սա ինչի է, իմ քարւանը քեզ, իսկ եթէ չիմանաս, քո շներն ինձ:

—Չատ բարի, ասաց թաթուխը և սկսեց իր դիտեցած բոլոր ծառերի անունը տալ, ասելով—հոնի է, զկուի է, սզնի է, բոխի է, աճարքի է, լորի է, թխկի է, տկողնի է, կաղնի է... և այսպէս շատ ծառի անուն տըւաւ, մինչև բոլոր դիտցածը հատաւ, բայց ոչ մէկն էլ այն չէր:

—Ռւրեմն շներն իմն են, ասաց քարւանի տէրը. կապիր զբանց և տուր ինձ:

—Սպասիր, դեռ էլի մտածեմ, ասաց թաթուխը. մի ծառի անուն դիտեմ, ահա լիզւս ծայրին է, բայց ուզիղ միաբան չի զալիս, որ ասեմ. ես հաստատ դիտեմ որ այն պիտի լինի:

Այս միջոցին ծոցումը մի բան սկսեց ճըրալու վեր-  
քը որոշ ձայնով ասաց.

—Ճըրը... ճըրը ճապկի, ճըր ճապկի, ճապկի: Այս  
ասողը ծոցումը դրած արիւնի կաթիլն էր:

—Դտայ, դտայ, բացազանչեց Թաթուխը և գաւա-  
զանից բռնելով ասաց.—ճապկի է:

—Դտար, ասաց քարւանի տէրը. քեզ արժանի է իմ  
քարւանը:

—Բոլոր քարւանդ ինձ հարկաւոր չէ, ասաց Թաթու-  
խը. ես մի հովիւ մարդ եմ, վաճառական չեմ. մի բեռը  
շորեղին տուր, տանեմ ինձ համար աղջիկ ուզեմ պսակ-  
ւեմ, այդ էլ բաւական է ինձ:

Քարւանի տէրն ընտրեց ընտիր ճոթեղին և ինչ զարդ  
ու զարդարանք որ պէտք էր հարսի ու փեսայի համար,  
բարձեց մի ջորու վրայ և տըւաւ Թաթուխին:

Մի քիչ որ հեռացաւ Թաթուխը, տեսաւ, որ ծոցումը  
մի բան է պրապում: Զեռքը ներս տարաւ որ տեսնի՝ ինչ  
չէ, և դուրս բաշեց մի ահապին օձ: Արիւնի կաթիլը դա-  
ռել էր օձ և գլուխն արդին հանել էր և մեկնել դէպի  
Թաթուխի բուկը: Թաթուխը դէն շպրտեց այդ օձը, որ  
ամեն մի վայրկեանում հաստանում և երկարում էր, որ  
վիշապ դառնայ, և ասաց իր շներին.

—Զանգի-Զրանգի, հէնց հուատ տըւէք, հէնց կուլ տը-  
ւէք, որ ոչ մի պուտ արիւն շըկաթի:

Հներն այսպէս էլ արին, և վիշապ աղջրկայ հետքը  
կտրեցին:

Թաթուխը հասաւ տուն ամեն բարիք բարձած ջո-  
րում: Իր համար աղջիկ, ուզեց պսակւեց:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք  
ձեր մուրազին:

## Մ Ա. Ն Ո Ւ Կ Խ Ա. Ն

Ինչպէս մեծերի մէջ կան տխմար և իմաստուն մար-  
դիկ, մանուկների մէջ էլ կան տխմարներ և իմաստուն-  
ներ: Իմաստութիւնը հասակից կախումն չունի. այդ մի  
նորհք է, որ Աստւած նրան է տալիս, ում ընտրում է  
ինքը: Այսպիսի ընտրածներ շատ քիչ են լինում թւով:  
Ամեն մարդ կարող է իմաստութիւնը սիրել, իմաստակը  
լինել, բայց ոչ իմաստուն: Սողոմնն իմաստունը տասներ-  
կու տարեկան ժամանակ արդին իմաստուն էր: Դանիէլ  
մարգարէն նոյնպէս իմաստուն էր շատ փոքր հասակից:  
Այսպիսի իմաստուն մանուկներ հայոց մէջ ես շատ են ե-  
ղել: Ահա այսպիսի մի մանուկի պատմութիւն պիտի  
անեմ:

\*

Թիֆլիս քաղաքի փողոցով մի մարդ էր գնում գէպի  
քաղաքի շուկան (բազարը) ձևով բարձած մի էշ առաջը  
գցած: Նրա ետևից էլ մի ուրիշ մարդ մի գիծ եզն էր  
առաջն արած տանում գէպի սպանդանոց: Եզնատէրը  
բղաւում է իշատիրոջը:

—Իշիդ կապը բռնիք, մի կողմ քաշւիք, եզս գիծ է,  
հարու կլտայ:

Մի քանի անգամ կանչում է այսպէս, բայց իշատէրը  
չըլսելն է զնում, մինչև եզը հասնում է և իր եղիսլներով  
զարկում է կթոցներին ու վայր վլորելով կոտրում ձւա-  
նը: Այս ժամանակ իշատէրը բռնում է եզնատիրոջ օձիքը  
և տանում դատարան:

Յս դէպքին ներկայ էին շատ մանուկներ և նայում  
էին նրանց կուին։ Մանուկներից մէկը՝ մի աշխոյժ և  
կայտառ երեխայ՝ երբ տեսաւ որ զբանք դատաստանի են  
դէմում, նրանց ետևից կանչեց.

— Եղնատէրը համբանայ, Եղնատէրը համբանայ

Այս խօսքն իմացաւ եղնատէրը և երբ դատաւորի  
մօտ գնացին, իշատէրն իր գանգատն արաւ, վնասը պա-  
հանջեց, դատաւորը դարձաւ եղնատիրոցը և հարցրեց, թէ  
ի՞նչ ունի ասելու, նաև իրան համը ձեացրեց և ձեռքով  
հասկացրեց դատաւորին, որ լեզու չունի:

— Այս մարդը համբ է, ասաց զատաւոլը, դու վկաներ բեր, որ ըստ դանդատի ուղիղ է:

— Տէր իմ, պատասխանեց էշատէրը, սա սուտ է համբ ձեանում, ընդհակառակն՝ քանի անդամ բդաւեց ն-տեկիցս, թէ մի կողմ քաշիր էշըդ, եզրս զիժ է, հարու կըտայ...

— Հատ լաւ, ինչու ուրեմն չըկատարեցիր այս մարդու ասածը. ուրեմն էլ ինչ ես ուզում սրանից:

Յամոյ զատաւորը եղնատիբոջը հարցըրեց, թէ ինչու է համբանում, քանի որ խօսել զիտէ:

— Տէր իմ, այս իմ խելքի բանը չէր, պատասխանեց եզնատէրը, այլ Աստուծոյ ողորմութիւնն էր, որ ինձ վրայ հասաւ մի երեխայի բերանով։ Երբոր այս մարդը ինձ քաշը ելով ձեզ մօտ էր բերում, մի շնորհալի մանուկ կանչեց ետևից։ «Եզան տէրը համբահայ»։ Ես էլ նրան լսելով համբացայ և ահա, ինչպէս տեսաք, այդ մարդն իր բերանով խոստովանեց, որ ես քանի անդամ կանչեցի իրան, թէ էշը մի կողմ քաշիր, եսո գիծ է։

— Հատ լաւ, գնահ, ասաց զատաւորը, զու արզար ես.  
միայն այն երեխային ուղարկիր ինձ մօտ, ես կուզեմ  
տեսնել նրան:

Սյս գէպքից յետոյ յայտնի եղաւ շատերին, որ ի-  
րանց մէջ մի խմաստուն մանուկ կայ, և ով որ տեսնում  
էր նրան՝ զլուխ էր վայր բերում, ինչպէս մեծ մարդու, և  
յարդում ու պատռում նրան, ինչպէս Աստուծոյ ընտրածի:

\*  
Բուն բարեկենդանի կիրակի երեկոն էր։ Ամեն տան  
մեծ խնդութիւն և ուրախութիւն կար։ Տխուը էր միայն  
քաղաքի մէջ մի նշանաւոր կին իր աղախնու և երեխանց  
հետ։ Դրանք ոչինչ չունէին ուտելու։

Տիկնոջ մարդը երեելի հարուստ վաճառական էր:  
Երկար ժամանակ էր, ինչ որ հեռացել էր քաղաքից և  
կնոջ համար ապրուստ չէր ուղարկել: Կինն սկսել էր տան  
կայքը քիշ-քիշ ծախել և նրանով կառավարել էր մի  
կերպ, վերջն սկսել էր ձեռագործութիւն անել, բայց գը-  
րանով այնքան վարձատրութիւն չէր ստանում, որ բա-  
ւական լինի իր ապրուստին: Այդ օրւայ ձեռագործին ըն-  
դամենը երկու շահի էին տըւել. մի շահու իւղ ու հաց էր  
առնով տըւել, խաշու շինել, մի շահու էլ խունկ ու մոմ:

Այս տիպալի ըոպէին մէկ էլ յանկարծ դուռը թըլիկ-թիկացրին։ Կնոջ ամուսինն էր նա, որ նոր էր եկել օտարութիւնից։

—Ով ես, հարցնում են ներսից, բայց մարդը խո-  
րամանկութեամբ իր անունը չի տալիս, իր կնոջ հաւա-  
տարմութիւնը փորձելու համար։

տարսութիւնը կուրծակիւ առաջեւ  
—Ես եմ, ասում է, ինչ էք հարցնում, միթէ չէք ճա-  
նաշում: Եւ այս ասում է ձայնը փոխած: Հարցնողը ա-  
զախինն էր, իսկ կինը բաց էր արել պատուհանը, որ  
եթէ օտար մարդ լինի ներս եկողը, իսկոյն ինքն իրան  
վայր զլորէ տան երրորդ յարկից: Այնքան տարի խեղճու-  
թին էր քաշել, բայց ոչ ոքի յայտնած չէր իր ճաւո-  
րութիւնը, արատաւորած չէր իր մաքուր անունը. լաւ էր  
համարել մեռնել, քան թէ որ և է անպատճիւն բերել  
իր անւանը: Մարզը երբ համոզւեց, որ օտարի առջև իր  
դուռը փակ է եղել, նոր յայտնեց իր անունը իր սեփա-  
կան ձայնով, թէ ևս Աւագն եմ, և դուռն իսկոյն բացւեց  
իր առջև:

Ներս զնաց տուն, բարեեց կնոջը և շորս կողմին նայելով և տունն անշուք ու ամեն զարդ ու զարդարանքից զուրկ գտնելով՝ մնաց ապշած, թէ այս ինչ է նշանակում:

— Այս ի՞նչ բան է, ի՞նչու էք այսպէս, հարցը եց:  
 — Դո՞ւ ողջ լինիս, ասաց կինը, ի՞նչ է եղել:  
 — Զարմանում եմ, ասաց մարդը, մի՛թէ մեր այս-ի՞նչ  
 ծառան քեզ չի հասցը ել իմ ուղարկած գոհարը:  
 — Ոչինչ չեմ ստացել նրանից, ասաց կինը. բայց նա  
 այժմ այլ ես ծառայ չէ, այլ քաղաքիս առաջին հարուստն  
 է. տներ է շինել հոյակապ պալատների նման, շինել է և  
 մի մեծ եկեղեցի իր անունով, թաղաւորի առաջին սիրե-  
 լին է այժմ:

— Հասկացայ. ուրեմն իմ ուղարկած հարստութիւնը  
 իրան է սեփականել և ձեզ մատնել այս թշրւառութեանը:  
 Ճատ լաւ, ես եմ իմանում, թէ վաղն ի՞նչ օյին կը բերեմ նրա  
 զիմին: Հիմա դատարկեցէք խուրչինս, այնտեղ ուտելու  
 բան շատ կայ, այս երեկոյիս բաւական է մեզ, վաղն  
 Աստւած ողորմած է:

Միւս օրը մեծ պասի երկուշաբթի օրն էր: Քաղաքի  
 բոլոր թաղերում մի-մի խանութիւն էին հաստատել և  
 մեծ-մեծ աղա մարդիկն անզամ բուրդը-դուրս մուշտակ-  
 ներ էին հագել, փափախները նոյնպէս, երեսներին ա-  
 լիւր քսել, շըջապատւել փառաշներով, որոնք նոյնպէս  
 ծաղրական շորեր էին հագել: Ամեն անցնողի կանչում էր  
 խանը և մի բանում մեղադրելով, նրանից մի տուգանք  
 էր առնում: Այս խաներից ամենից նշանաւորը Մանուկ-  
 խանն էր:

Մեր իմաստուն մանուկին խան էին շինել և նա դա-  
 տաստան էր անում ոչ ծաղրածութեամբ, այլ բոլորովին  
 լուրջ կերպով: Բոլոր մեծ ու փոքր մնացել էին հիացած,  
 տեսնելով որ մի տասներկու տարեկան պատանի՝ մարդ-  
 կանց սրտերի խորքերն է թափանցում, նրանց վատ ա-  
 րարքները երեսներին դարկում և հրամայում իր փառաշ-  
 ներին, որ ծեծեն անխնայ և որոշած տուգանքն առնեն:  
 Բայց և շատերին, որոնք զրկւած էին, խեղճ էին և թշր-  
 ւառ, նրանց էլ կանչում էր, միսիթարում, խրատում և հա-  
 ւաքած տուգանքներից մի բան տալիս, որ տանեն իրանց  
 պակասութիւնը հոգան:

Հինց այս միջոցին Մանուկ-խանը նկատեց, որ մի  
 մարդ երեսի գոյնը նետած՝ անց է կենում շտապ-շտապ,  
 մարտնցքը սպմելով և սլուշները կծոտելով — իսկոյն հրա-  
 բունցը իր փառաշներին, որ բռնեն այն մարդին: Մարդին  
 բռնեցին և բերին Մանուկ-խանի առջել կանգնացը ին:  
 Այս մարդը Աւագ փաճառականն էր:

— Ի՞նչ մարդ ես դու և ուր ես գնում այդպէս կա-  
 տաղած, հարցը եց Մանուկ-խանը:

Վաճառականը տեսնելով, որ սա համար չի անում և  
 պատրաստ է մինչև անգամ ծեծել տալու, ասաց.

— Խան, գլխիդ արեիդ մատաղ, ես մի զանգատ ու-  
 նիմ, արդար դատաստան արա: Այս-ի՞նչ ժամանակ այս-  
 ինչ մարդու ձեռքով ես Բաղդադից մի հրաշալի գոհար  
 ուղարկեցի իմ կնոջ համար: Երեկ երեկոյին եկայ և իմա-  
 ցայ, որ մարդը իմ սամանաթս տեղ չի հասցը ել: Այսօր  
 գնացի իրան ասացի, նա թէ ես տըւել եմ կնոջդ, նա  
 գնացի լինի և վատնէ, ես ի՞նչ մեղաւոր եմ: Եւ սկսեց  
 որ շուայլ լինի և վատնէ, ես ի՞նչ մեղաւոր եմ: Եւ սկսեց  
 կյոջս վրայ վատ-վատ բաներ խօսել: Գնացի թագաւորին  
 գանգատեցի, թագաւորը կանչեց նրան, նա էլ իր հետ  
 երեք վկայ բերաւ, որոնք միաբերան հաստատեցին, որ  
 մարդն իմ գոհարը տըւել է կնոջս: Ի՞նչ է մնում ինձ ա-  
 նել այժմ, թէ ոչ մահու չափ պատժել կնոջս: Ահա և այն  
 մարդիկը, որոնք անցնում են:

— Ճատ լաւ, ասաց Մանուկը: Գրագիրներ, զրեցէք  
 այս մարդու գանգատը, իսկ դուք, փառաշներ, բռնեցէք  
 այն չորսին էլ և բերէք այստեղ:

Փառաշները բռնեցին երբեմն ծառայ, իսկ այժմ քա-  
 ղաքի աղաներից մէկին և նրա երեք վկաներին: Մանուկ-  
 խանը հրամայեց, որ վկաներին հեռացնեն իրարից և ջոկ-  
 ջոկ սենեակում փակեն: Յետոյ դառնալով թագահարուս-  
 տին՝ ասաց.

— Այս մարդը քեզ ի՞նչ դոհար է տըւել, ի՞նչ գոյն  
 ունէք, ի՞նչ ձև ունէք, ի՞նչ մեծութիւն, ի՞նչ ծանրութիւն  
 և ի՞նչ զօրութիւն:

Մարդն ասաց, որ գոհարը մի քար էր կատուի աչքի



չափ և նման։ Յերեկը խաւար էր երեսմ, իսկ գիշերը  
փայլում էր։ Թէ ինչ ծանրութիւն ունէր, չըգիտեմ, չեմ  
կշռել, և թէ ինչ զօրութիւն ունէր, նոյնպէս չըգիտեմ,  
չեմ փորձել։

—Դու ասա. ի՞նչ զօրութիւն ունէր գոհարը, հարց-  
րեց վաճառականին։

—Իմ գոհարն այն զօրութիւնն ունէր, որ ինչ դա-  
տարկ քասկում էլ դնէիր, իսկոյն ոսկով կըլցնէր, պա-  
տասխանեց Աւագը։

—Ճատ բարի։ Իսկ զու ի՞նչ արիր այն գոհարը, յանձ-  
նեցիր տիրոջը, հարցրեց մնղաղբւողից։

—Այո՛, յանձնել եմ, պատասխանեց թագա - հա-  
րուստը։

—Ճատ լաւ, տարեք սրան մի առանձին սենեակ և  
բերեք վկաներից մէկին։

—Դու տեսար, հարցրեց վկային, որ այն մարդը  
այս մարդու կնոջը յանձնեց սրա ուղարկած ամանաթը։

—Այո՛, պատասխանեց վկան։

—Ի՞նչ բան էր։

—Քար էր։

—Ի՞նչ զոյնի քար էր։

—Սպիտակ։

—Ի՞նչ մեծութիւն ունէր։

—Ահա այսափ կըլինէր, ասաց նա, ցոյց տալով իր  
ձեռքի բռունցքը։

—Թանաք քսեցէք սրա ամբողջ բռունցքին և նրանով  
թող գլոշմէ թղթի վրայ քարի մեծութիւնը։

Հրամանը կատարւեց։ Թագա-հարուստը սուս վը-  
կաներ վարձելով՝ նրանց ասել էր, որ քար է եղել իր  
ստացածն ու տըւածը, բայց մոռացել էր ասել թէ ի՞նչ-  
պիսի քար էր։

—Հիմա տարեք սրան իր սենեակը և միւս վկային  
բերեք։ Միւս վկան էլ ցոյց տըւաւ, որ քարի մեծութիւնը

մի թաթաշափ էր, ձեր տափակ էր, զոյնը սև Եղբորդ վկան ցոյց տըւաւ, որ քարի մեծութիւնը եղունկի չափ էր, զոյնը կարմիր, ձեր քառանկիւնի:

Մանուկ-խանն այս ամենը գրել տըւաւ և յետոյ բոլորին երես առ երես բերելով՝ կարդաց ամենը ցուցմունքները: Սուտ վկանները սարսափի մէջ ընկան, ամանաթ ուրացողը ամօթահար եղաւ:

Բոլոր հանդիսականները միաձայն գոռացին.

—Կախեցէր դրանց, կախեցէր, խեղեցէր, սպանեցէր,

—Սպասեցէր, ասաց Մանուկ-խանը, և դառնալով ուրացողին՝ ասաց.


—Այս ըոպէիս յետ դարձրու այս մարդի ապրանքը. և քեզ կազատեմ, եթէ ոչ՝ կըհրամայեմ, և իսկոյն կըզբխատեն քեզ:

Թագաւորի մօտ զնալիս ուրացողը զոհարը տարել էր հետը, որ եթէ բանը բացւի, յետ դարձնէ: Ծոցիցը հանեց զոհարը և տըւաւ Մանուկ-խանին:

Մանուկ-խանն էլ զոհարը յանձնեց տիրոջը և սոսրագրութիւն առաւ նրանից, որ իր ապրանքն ստացաւ:

Ժողովուրդը շատ զօհ մնաց այդ արդար զատաստանից և Մանուկ-խանին զովասաններով մինչև երկինք բարձրացրեց: Այս զատաստանի լուրը հասաւ մինչև թագաւորի ականջը: Թագաւորը կանչեց Մանուկ-խանին և ամեն բան մանրամասն իմանալով՝ մեծ պարզեներ տըւաւ նրան և իր մեծ իշխանների կարգը դասեց:

Մինչև այսօր էլ Մեծ պասի երկուշաբթի օրը շատերն են խան զառնում Թիֆլիսում, բայց Մանուկ-խանի պէս խան միայն մէկ անգամ է եղել և այլ ևս չի կը կնւել:



## ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. „ԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“

### ՀԵՅԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերագարդ սերիա

1. Պ.ազ. Աղայեանի. Գիւլնազ-տատի հէքիաթը, Աշծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան . . . . . 15 կ.
2.      »      »      »      Անտառի մանուկը, Ասլան-Բալա, Եղեգնուհի . . . . . 15 կ.

### Տպագրւելու են

3. Ֆոլովրդական. Ոսկի ձկնիկ,
4.      »      »      Գառնուկ-եղբայր, Աղուէսը, Գայլը,  
Արջն ու Զմռուխտ-Դուշը.

### ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ լոյս են տեսնելու առանձին գրքոյներով մեր բանաստեղծների լաւագոյն ստեղծագործութիւնները: Արդէն հրատարակւած են

1. Յովիան. Թումանեանի Սասունցի Դաւիթը 15 կ.
2.      »      »      Անուշ . . . . . 15 »
3.      »      »      Լեզենդներ . . . . . 15 »
4. Շանիքի . . . . . Երգեր . . . . . 15 »
5.      »      »      Լեռան աղջիկը . . . . . 15 »

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԻՆԵՐ

1. Գ. Գեմիրչեան. Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը (պատմւածքներ) . . . . . 7 կ.
2. Վերեսաեւ. Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մաշը, թարգմ. Պ. Պոշեան . . . . . 6 կ.

### ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՐՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Տօվարիչество „Ст. Лисиціанъ и К°“ (Бебутовская ул. 29) և Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 15).

ԱՅ. ԼԻՍԻՑԵԱՆԻ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

Հ. Սենկերիչ Յու Կըթաս. գ. 1 լ. 50 կ.

Brks-Հարս Ինհրսունսութը տարի առաջ. գ. 25 կ.

Ա. Բողէս պրօժ. Հրաշալի դար. 19-րդ դարի դրական և  
բացասական կողմերը. գ. 80 կ.

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ



Խնդրում ենք այն անձանց, որոնք հաւաքած ունեն  
ժողովրդական ընտիր հէքիաթներ, ուղարկել Հնկերու-  
թեանս այդ հէքիաթները մշակելու և մեր սերիայի մէջ  
պատկերազարդ հրատարակելու համար:

ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. „ՏՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.»

ՀԵՐԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

## պատկերազարդ սերիա

1. Պազ. Աղայեանի. Գիւլնագատատի հէքիաթը, Աշծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան . . . . . 15 կ.  
 2.      »      »      Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ասլան-Շալա . . . . . 15 կ.

## ՀԱՅ ԲԱՆԱՍԵՂԾՆԵՐ

Ընդհանուր վերնաշոփի տակ հետզհետէ լոյս հն  
տեսնելու առանձին գրբոյլներով մեր բանաստեղծների  
լաւագոյն ստեղծագործութիւնները: Արդէն հրատարակ-  
ւած են

- |    |                    |              |        |    |    |
|----|--------------------|--------------|--------|----|----|
| 1. | Յովիան. Թումանեանի | Սասունցի     | Դաւիթը | 15 | կ. |
| 2. | »                  | Անուշ        | .      | 15 | »  |
| 3. | »                  | Լեզենդներ    | .      | 15 | »  |
| 4. | Շանքի              | Երգեր        | .      | 15 | »  |
| 5. | »                  | Լեռան աղջկեր | .      | 15 | »  |

Φ n η n t r η w k w G q r f n j k G k r

1. Գելիքը և անունը, Պ. Ուժառաւորներ, Աշուղի հէքիաթը.
  2. Վերեսակ, Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մահը, թարգմ. Պ. Պհօշեան. 6 կ.
  3. Շլիքը Ս. Մի մահ և Անառակը. պատմածքներ (տպագրուում է).

ԳԻՒՆ Ե 15 ԿՈՊ.

## ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Заводи-Барбаканъ и К°. (Бебутовск. ул. 29) в Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 5).



ՀՀ Ազգային գրադարան

NL0321491

18.692

891.99  
L2 - 44